ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ (ԱՐՄՍՏԱՏ)

*ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

# *ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՆՈՅԵՄԲԵՐԻՆ*



**ԹԻՎ 11**

*ԵՐԵՎԱՆ – 2020*

## Սպառողական գների փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում 2020թ. հունվար-նոյեմբերին*

Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում 12-ամսյա գնաճը (2020թ. նոյեմբերը 2019թ. նոյեմբերի նկատմամբ) կազմել է 1.6%, իսկ նախորդ ամսվա նկատմամբ՝ 1.3%:

| Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ (ԱՍԸՆԴ) երկու նիշ մակարդակ | | 2020թ. | | | |
|---|---|---|---|---|---|
| | | նոյեմբերը | | հունվար-նոյեմբերը | նոյեմբերը |
| | | 2019թ. նոյեմբերի նկատմամբ, % | 2020թ. հոկտեմբերի նկատմամբ,% | 2019թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ,% | 2019թ. դեկտեմբերի նկատմամբ, ինդեքս |
| 00 | Սպառողական գների ինդեքս- ընդամենը | 1.6 | 1.3 | 1.0 | 100.3 |
| | այդ թվում՝ | | | | |
| 01 | Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք | 0.8 | 2.8 | -0.2 | 97.9 |
| 02 | Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ | 10.2 | 0.4 | 9.9 | 110.1 |
| 03 | Հագուստ և կոշիկ | -1.6 | 1.9 | 1.0 | 98.8 |
| 04 | Բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ | 0.4 | 0.3 | 0.9 | 100.2 |
| 05 | Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն | 2.3 | 0.5 | 0.7 | 102.3 |
| 06 | Առողջապահություն | 2.8 | 0.3 | 2.1 | 102.6 |
| 07 | Տրանսպորտ | 2.0 | 0.6 | -0.5 | 101.7 |
| 08 | Կապ | -0.1 | 0.0 | -0.1 | 99.9 |
| 09 | Հանգիստ և մշակույթ | -0.2 | -1.1 | 0.9 | 98.1 |
| 10 | Կրթություն | 2.0 | 0.0 | 3.2 | 102.0 |
| 11 | Ռեստորաններ և հյուրանոցներ | 1.6 | -0.5 | 1.5 | 102.0 |
| 12 | Տարբեր ապրանքներ և ծառայություններ | 3.9 | 0.1 | 3.6 | 104.3 |

Սպառողական գների փոփոխությունները 2020թ. նոյեմբերին 2015թ. նկատմամբ **




* Սույն վերլուծականում հիմնականում տրված է Հայաստանի Հանրապետությունում 2020թ. նոյեմբերի գնային փոփոխությունների հակիրճ մեկնաբանությունը: Սպառողական գների ինդեքսների ավելի ընդարձակ (այդ թվում, կուտակային (աճողական)) տեղեկատվությունը զետեղվում է <<Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում>> ամսական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1300-301):

** Եվրոստատի կողմից սահմանված ինդեքսի հիման ժամանակաշրջան:

Ենթաինդեքսների փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2020թ. նոյեմբերին (նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ)

%




Ենթաինդեքսների փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2020թ. նոյեմբերին (նախորդ ամսվա նկատմամբ)

%




Սպառողական գների փոփոխություններն ըստ սպառման հիմնական խմբերի

| | 2020թ. | | | |
|---|---|---|---|---|
| | նոյեմբերը | | հունվար-նոյեմբերը | նոյեմբերը |
| | 2019թ. նոյեմբերի նկատմամբ,% | 2020թ. հոկտեմբերի նկատմամբ,% | 2019թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ,% | 2019թ. դեկտեմբերի նկատմամբ, ինդեքս |
| Սպառման ապրանքներ | 1.5 | 1.9 | 0.8 | 99.7 |
| այդ թվում՝ | | | | |
| սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք (ներառյալ ալկոհոլային խմիչք և ծխախոտ) | 1.7 | 2.6 | 0.8 | 99.1 |
| ոչ պարենային ապրանքներ | 1.0 | 0.6 | 0.8 | 101.0 |
| Ծառայություններ | 1.5 | 0.1 | 1.3 | 101.4 |

Սպառողական գների հավելաճը 2011-2020թթ. նոյեմբերին

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %




2020թ. հունվար-նոյեմբերին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.03% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է 0.05% նվազում)։

Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2020թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ սպառողական գներն աճել են 1.0-1.5%-ով, այդ թվում, համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է Աշտարակ և Գավառ քաղաքներում։ Մայրաքաղաքում սպառողական գներն աճել են 1.3%-ով։

**Սննդամթերքի գներ:** 2020թ. նոյեմբերին 2019թ. նոյեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 0.8%, իսկ 2020թ. հոկտեմբերի համեմատ՝ 2.8% գնաճ։ Վերջինս հիմնականում պայմանավորվել է մրգի, կաթնամթերքի, շաքարի և շաքարավազի, յուղերի և ճարպերի, բանջարեղենի 1.9-20.5% գնաճով։

Բանջարեղենի ապրանքախմբում[1] 2020թ. նոյեմբերին 2019թ. նոյեմբերի համեմատ արձանագրվել է 9.2% գնանկում, իսկ 2020թ. հոկտեմբերի համեմատ՝ 20.5% գնաճ։

Բանջարեղենի գների փոփոխությունները 2018-2020թթ. հունվար-նոյեմբերին

նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ,%




| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպ-տեմբեր | Հոկ-տեմբեր | Նոյեմբեր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2018 | -2.2 | -4.2 | 0.0 | -12.3 | -21.4 | -22.6 | -1.0 | 23.2 | 19.2 | -1.5 | -6.4 |
| 2019 | -9.1 | 5.6 | 8.2 | 12.2 | 22.0 | 19.1 | 11.7 | -4.3 | -4.0 | 9.3 | 10.6 |
| 2020 | -6.4 | -12.9 | -6.6 | -6.5 | -3.7 | 4.6 | -5.4 | 0.3 | -6.9 | -9.5 | -9.2 |

[1] *2020թ. հոկտեմբեր-նոյեմբերին 2019թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների ինդեքսների մասին տեղեկատվությունը բերված է հավելված 1-ում:*

Մրգի ապրանքախմբում[1] 2020թ. նոյեմբերին 2019թ. նոյեմբերի համեմատ արձանագրվել է 9.7%, իսկ 2020թ. հոկտեմբերի համեմատ՝ 1.9% գնաճ:

Մրգի գների փոփոխությունները 2018-2020թթ. հունվար-նոյեմբերին

նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ,%



| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմ-բեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2018 | 0.2 | -0.6 | 6.4 | 4.5 | 4.7 | -16.1 | -12.6 | -3.3 | 0.4 | 8.1 | 2.0 |
| 2019 | 7.2 | 11.3 | 3.3 | 1.8 | 3.2 | 8.6 | -0.1 | -5.9 | -1.9 | 8.3 | 4.3 |
| 2020 | -0.5 | -2.1 | 0.9 | 9.2 | 13.8 | 14.2 | 33.6 | 30.6 | 20.1 | 11.3 | 9.7 |

***2020թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ մրգի և բանջարեղենի ապրանքախմբերի ընդհանուր գնաճը կազմել է 12.96% :Վերը նշված ապրանքախմբերը սպառողական զամբյուղում ունենալով 10.32% տեսակարար կշիռ, նշված ժամանակահատվածում նպաստել են սպառողական գների ընդհանուր մակարդակի աճին 1.3 տոկոսային կետով:***

Յուղերի և ճարպերի ապրանքախմբում 2020թ. նոյեմբերին 2019թ. նոյեմբերի համեմատ արձանագրվել է 7.0%, իսկ 2020թ. հոկտեմբերի համեմատ՝ 2.5% գնաճ (արևածաղկի բուսական յուղի միջին գնաճը 2020թ. նոյեմբերին 2019թ. նոյեմբերի համեմատ կազմել է 20.9%, իսկ 2020թ. հոկտեմբերի համեմատ՝ 5.9%):

Կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբում 2020թ. նոյեմբերին 2019թ. նոյեմբերի համեմատ արձանագրվել է 2.6%, իսկ 2020թ. հոկտեմբերի համեմատ՝ 2.0% գնաճ: Ձվի գինը 2020թ. նոյեմբերին 2019թ. նոյեմբերի համեմատ աճել է 6.0%-ով, իսկ 2020թ. հոկտեմբերի համեմատ՝ 7.6%-ով:

Շաքարի և շաքարավազի ապրանքախմբում 2020թ. նոյեմբերին 2019թ. նոյեմբերի համեմատ արձանագրվել է 26.6%, իսկ 2020թ. հոկտեմբերի համեմատ՝ 2.0% գնաճ:

Ձկան և ծովամթերքի ապրանքախմբում 2020թ. նոյեմբերին 2019թ. նոյեմբերի համեմատ արձանագրվել է 2.8% գնանկում, իսկ 2020թ. հոկտեմբերի համեմատ՝ 0.5% գնաճ:

Ալկոհոլային խմիչքի և ծխախոտային արտադրատեսակների ապրանքախմբում 2020թ. նոյեմբերին 2019թ. նոյեմբերի համեմատ արձանագրվել է 10.2%, իսկ 2020թ. հոկտեմբերի համեմատ՝ 0.4% գնաճ:

Հացաբուլկեղենի և ձավարեղենի գները 2020թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ աճել են 0.2%-ով, սուրճի, թեյի կակաոյի ապրանքախմբում գնանցվել է 0.1% գնանկում, իսկ մսամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի ապրանքախմբում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

**Ոչ պարենային ապրանքների գներ:** Ոչ պարենային ապրանքների շուկայում 2020թ. նոյեմբերին 2019թ. նոյեմբերի համեմատ արձանագրվել է 1.0%, իսկ 2020թ. հոկտեմբերի համեմատ՝ 0.6% գնաճ:

2020թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է խոշոր կենցաղային սարքերի, կենցաղային և այգեգործական գործիքների՝ 0.1%, կահույքի, ապակե ամանեղենի, ճաշասպասքի և տնային կահ-կարասու՝ 0.2%, ոսկերչական զարդերի՝ 0.5%, դեղագործական ապրանքների՝ 0.6%, մաքրող, լվացող միջոցների՝ 1.0%, տարբեր տեսակի կոշկեղենի՝ 1.4%, հագուստի՝ 2.1% գնաճ: Միաժամանակ, բնակարանի նորոգման նյութերի, փոքր կենցաղային սարքերի, գորգերի և հատակի ծածկերի գները նվազել են 0.1%-ով:

2020թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի 0.4% գնաճ և դիզելային վառելիքի 3.6% գնանկում: 2020թ. նոյեմբերին 2019թ. նոյեմբերի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գները նվազել են 13.9% և 23.8%-ով, իսկ 2019թ. դեկտեմբերի համեմատ՝ 15.6% և 25.2%-ով:

Բենզինի և դիզելային վառելիքի միջին ամսական գների փոփոխությունները 2017-2020թթ.

2015թ. նկատմամբ




**Ծառայությունների սակագներ:** Մատուցված ծառայությունների ոլորտում 2020թ. նոյեմբերին 2019թ. նոյեմբերի համեմատ արձանագրվել է սակագների 1.5%, իսկ 2020թ. հոկտեմբերի համեմատ 0.1% հավելաճ:

**Արտարժույթի շուկա:** 2020թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ սպառողական և արտարժույթի շուկաներում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի՝ համապատասխանաբար 1.3% և 1.6% հավելաճ (ԱՄՆ դոլարն արժևորվել է): 2020թ. նոյեմբերին 2019թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.3% և 4.5% հավելաճ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում սպառողական գները և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը նվազել են 0.5% և 1.6%-ով: 2020թ. նոյեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 499.6 դրամ, ինչը 4.7%-ով բարձր է 2019թ. նոյեմբերի համապատասխան ցուցանիշից (477.1 դրամ):

ՀՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի, եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները 2019-2020թթ. հունվար-նոյեմբերին

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ



*Հավելված 1*

Մրգի և բանջարեղենի առանձին տեսակների սպառողական
գների տոկոսային փոփոխությունները ՀՀ-ում

| | 2020թ. | | | |
|---|---|---|---|---|
| | Հոկտեմբերը | | Նոյեմբերը | |
| | 2020թ. սեպտեմբերի նկատմամբ | 2019թ. հոկտեմբերի նկատմամբ | 2020թ. հոկտեմբերի նկատմամբ | 2019թ. նոյեմբերի նկատմամբ |
| Խնձոր | 0.02 | 57.6 | -1.4 | 34.3 |
| Տանձ | -3.3 | 16.3 | 3.9 | 8.4 |
| Նուռ | -19.2 | 18.8 | 10.1 | 33.9 |
| Դեղձ | 19.0 | 38.5 | 25.7 | 26.9 |
| Խաղող | -6.7 | -21.9 | 13.8 | -31.0 |
| Ադամաթուզ (բանան) | 5.5 | -12.1 | 9.5 | -3.1 |
| Նարինջ | -3.3 | 3.6 | -15.1 | 38.0 |
| Մանդարին | -27.9 | -0.4 | -18.1 | 14.9 |
| Կիտրոն | -4.5 | 10.2 | -6.5 | 10.7 |
| Ձմերուկ | 21.7 | 9.3 | 38.1 | 45.8 |
| Ելակ | -2.1 | -15.5 | 10.1 | -23.7 |
| | | | | |
| Կաղամբ | -16.4 | 7.7 | -8.3 | 3.2 |
| Կանաչ սոխ | -0.6 | -17.7 | 13.6 | -13.4 |
| Խառը կանաչեղեն | 0.2 | -13.9 | 9.2 | -7.1 |
| Լոլիկ | 24.6 | -29.7 | 76.2 | -24.4 |
| Վարունգ | -2.4 | -41.4 | 157.4 | -7.0 |
| Սմբուկ | 11.8 | -9.1 | 51.2 | -30.6 |
| Պղպեղ | 9.9 | -17.0 | 33.7 | -18.0 |
| Կանաչ լոբի | 8.4 | -16.2 | 47.4 | -6.9 |
| Գազար | 4.8 | -23.7 | 1.4 | -22.8 |
| Ճակնդեղ | 5.8 | -29.0 | 2.0 | -29.3 |
| Գլուխ սոխ | 1.4 | -19.8 | 2.1 | -25.5 |
| Սխտոր | 9.6 | 106.6 | 4.8 | 97.6 |
| Սունկ | -0.3 | -10.3 | 0.4 | -12.1 |
| Կարտոֆիլ | 4.8 | -23.1 | 2.4 | -18.4 |

*Հավելված 2*

Սպառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում [1]

| | 2019թ. դեկտեմբերը 2018թ. դեկտեմբերի նկատմամբ | 2020թ. | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվարը | փետրվարը | մարտը | ապրիլը | մայիսը | հունիսը | հուլիսը | օգոստոսը | սեպտեմբերը | հոկտեմբերը | հոկտեմբերը 2019թ. դեկտեմբերի նկատմամբ |
| | | նախորդ ամսվա նկատմամբ | | | | | | | | | | |
| Ավստրիա | 101.8 | 99.3 | 100.0 | 100.5 | 100.2 | 99.1 | 100.4 | 99.9 | 99.7 | 100.8 | 100.2 | 100.2 |
| Բելգիա | 100.9 | 98.9 | 101.5 | 99.6 | 99.8 | 99.8 | 100.4 | 100.7 | 98.5 | 100.8 | 100.2 | 100.1 |
| Բուլղարիա | 103.1 | 100.5 | 100.0 | 99.5 | 99.6 | 99.8 | 99.9 | 100.8 | 100.4 | 98.8 | 100.2 | 99.5 |
| Հունգարիա | 104.1 | 100.9 | 100.3 | 100.2 | 99.5 | 100.4 | 100.4 | 101.2 | 100.0 | 99.5 | 100.2 | 102.7 |
| Գերմանիա | 101.5 | 99.2 | 100.6 | 100.1 | 100.4 | 100.0 | 100.7 | 99.5 | 99.8 | 99.6 | 100.0 | 99.8 |
| Հունաստան | 101.1 | 98.7 | 99.6 | 101.2 | 99.9 | 99.8 | 99.3 | 98.6 | 99.3 | 101.5 | 100.2 | 98.2 |
| Դանիա | 100.8 | 100.2 | 100.4 | 99.7 | 99.9 | 99.9 | 100.1 | 100.9 | 99.6 | 99.8 | 100.3 | 100.8 |
| Իռլանդիա | 101.1 | 99.3 | 100.6 | 100.4 | 99.6 | 99.4 | 100.4 | 99.8 | 99.9 | 99.6 | 99.5 | 98.5 |
| Իսպանիա | 100.8 | 98.6 | 99.9 | 100.6 | 100.4 | 100.1 | 100.4 | 98.4 | 100.0 | 100.4 | 100.3 | 99.2 |
| Իտալիա | 100.5 | 98.2 | 99.5 | 102.2 | 100.5 | 99.7 | 100.0 | 99.3 | 98.7 | 100.9 | 100.6 | 99.5 |
| Կիպրոս | 100.7 | 99.2 | 100.2 | 100.2 | 99.9 | 100.1 | 100.4 | 99.8 | 100.8 | 99.2 | 100.2 | 99.8 |
| Լատվիա | 102.1 | 100.3 | 100.2 | 100.3 | 99.5 | 99.7 | 100.2 | 100.3 | 99.6 | 99.9 | 99.9 | 99.9 |
| Լիտվա | 102.7 | 100.2 | 100.0 | 99.9 | 100.2 | 99.5 | 100.4 | 99.7 | 99.8 | 100.3 | 100.0 | 100.0 |
| Լյուքսեմբուրգ | 101.8 | 99.6 | 101.0 | 98.8 | 99.2 | 99.7 | 100.9 | 99.7 | 100.9 | 99.8 | 100.0 | 99.4 |
| Մալթա | 101.3 | 98.6 | 100.6 | 101.0 | 102.9 | 101.2 | 101.4 | 100.0 | 100.7 | 98.7 | 98.7 | 104.0 |
| Նիդերլանդներ | 102.8 | 98.7 | 100.9 | 100.3 | 101.0 | 99.8 | 100.5 | 100.9 | 99.3 | 99.6 | 100.8 | 101.7 |
| Լեհաստան | 103.0 | 100.7 | 100.6 | 100.2 | 100.0 | 100.8 | 100.6 | 99.9 | 99.9 | 100.2 | 100.3 | 103.1 |
| Պորտուգալիա | 100.4 | 99.2 | 99.4 | 101.6 | 100.8 | 99.8 | 101.2 | 98.0 | 99.7 | 100.8 | 99.9 | 100.4 |
| Ռումինիա | 104.0 | 100.7 | 100.0 | 100.4 | 100.3 | 100.0 | 100.0 | 100.2 | 100.0 | 99.6 | 100.1 | 101.2 |
| Սլովակիա | 103.2 | 101.3 | 100.1 | 100.0 | 99.9 | 100.3 | 99.9 | 100.1 | 99.9 | 100.0 | 100.1 | 101.6 |
| Սլովենիա | 102.0 | 99.5 | 100.4 | 99.4 | 98.7 | 100.7 | 100.9 | 99.8 | 100.0 | 99.8 | 100.3 | 99.5 |
| Ֆինլանդիա | 101.1 | 99.6 | 100.5 | 99.8 | 99.6 | 99.9 | 100.2 | 100.3 | 100.0 | 100.0 | 100.1 | 100.1 |
| Ֆրանսիա | 101.6 | 99.5 | 100.0 | 100.1 | 100.0 | 100.2 | 100.1 | 100.4 | 99.9 | 99.4 | 100.0 | 99.5 |
| Խորվաթիա | 101.3 | 99.9 | 99.5 | 100.0 | 100.0 | 99.9 | 100.5 | 100.3 | 99.8 | 99.9 | 100.4 | 100.3 |
| Չեխիայի Հանրապետություն | 103.2 | 101.6 | 100.3 | 100.0 | 99.8 | 100.5 | 100.5 | 100.5 | 100.0 | 99.4 | 100.1 | 102.7 |
| Շվեդիա | 101.7 | 98.7 | 100.4 | 99.8 | 99.6 | 100.6 | 100.6 | 100.2 | 99.8 | 100.1 | 99.9 | 99.9 |
| Էստոնիա | 101.8 | 99.4 | 100.6 | 99.4 | 99.7 | 99.4 | 100.7 | 100.0 | 100.6 | 99.9 | 99.4 | 99.0 |
| Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ-27)[2] | 101.6 | 99.3 | 100.2 | 100.5 | 100.2 | 100.0 | 100.3 | 99.8 | 99.7 | 100.0 | 100.2 | 100.2 |
| Հայաստան | 100.7 | 101.4 | 99.8 | 100.5 | 100.9 | 99.9 | 98.6 | 97.9 | 99.9 | 99.8 | 100.5 | 99.0 |
| Ռուսաստան | 103.0 | 100.4 | 100.3 | 100.6 | 100.8 | 100.3 | 100.2 | 100.4 | 100.0 | 99.9 | 100.4 | 103.3 |
| Բելառուս | 104.7 | 100.9 | 101.0 | 100.9 | 100.6 | 99.9 | 100.2 | 100.2 | 100.2 | 100.9 | 100.6 | 105.4 |
| Ուկրաինա | 104.1 | 100.2 | 99.7 | 100.8 | 100.8 | 100.3 | 100.2 | 99.4 | 99.8 | 100.5 | 101.0 | 102.7 |
| Ղազախստան | 105.4 | 100.7 | 100.6 | 100.9 | 100.9 | 100.5 | 100.4 | 100.3 | 100.1 | 100.3 | 100.6 | 105.5 |
| Ղրղզստան | 103.1 | 100.6 | 100.6 | 101.5 | 102.2 | 98.8 | 99.4 | 99.4 | 99.8 | 100.7 | 102.3 | 105.3 |
| Մոլդովա | 107.5 | 100.6 | 99.98 | 100.1 | 100.2 | 100.2 | 99.99 | 99.8 | 99.2 | 99.7 | 100.1 | 99.9 |
| Տաջիկստան | . . . | 100.6 | 100.4 | 101.6 | 102.2 | 100.5 | 99.9 | 100.3 | 100.2 | . . . | . . . | . . . |
| Վրաստան | 107.0 | 100.7 | 100.3 | 100.7 | 100.9 | 100.2 | 98.6 | 99.5 | 100.0 | 100.7 | 100.8 | 102.5 |
| Կանադա | 102.2 | 100.3 | 100.4 | 99.4 | 99.3 | 100.3 | 100.8 | 100.0 | 99.9 | 99.9 | 100.4 | 100.8 |
| Նորվեգիա | 101.2 | 99.9 | 99.9 | 99.9 | 100.5 | 100.2 | 100.3 | 100.8 | 99.5 | 100.4 | 100.4 | 101.7 |
| Բրազիլիա | 104.3 | 100.2 | 100.3 | 100.1 | 99.7 | 99.6 | 100.3 | 100.4 | 100.2 | 100.6 | 100.9 | 102.2 |
| Կորեայի Հանրապետություն | 100.7 | 100.6 | 100.0 | 99.8 | 99.4 | 99.8 | 100.2 | 100.0 | 100.6 | 100.7 | 99.4 | 100.5 |
| Չինաստան | 104.5 | 101.4 | 100.8 | 98.8 | 99.1 | 99.2 | 99.9 | 100.6 | 100.4 | 100.2 | 99.7 | 100.2 |
| Միացյալ Թագավորություն | 101.3 | 99.7 | 100.4 | 100.0 | 99.8 | 100.0 | 100.1 | 100.4 | 99.6 | 100.4 | … | … |
| ԱՄՆ | 102.3 | 100.4 | 100.3 | 99.8 | 99.3 | 100.0 | 100.5 | 100.5 | 100.3 | 100.1 | 100.0 | 101.3 |
| Թուրքիա | 111.8 | 101.4 | 100.4 | 100.6 | 100.9 | 101.4 | 101.1 | 100.6 | 100.9 | 101.0 | 102.1 | 110.6 |
| Շվեյցարիա | 99.9 | 99.6 | 99.9 | 100.1 | 100.1 | 99.8 | 99.9 | 100.1 | 99.9 | 99.9 | 100.0 | 99.3 |
| Ճապոնիա | 100.8 | 99.9 | 99.8 | 100.0 | 99.9 | 100.0 | 99.9 | 100.1 | 100.2 | 99.9 | … | … |

. . . - Տվյալները բացակայում են:

[1] Տեղեկատվությունը պատրաստվել է Ռուսաստանի Դաշնության պետական վիճակագրական ծառայության կայքում զետեղված «2020թ. հոկտեմբերի Ռուսաստանի և արտասահմանյան երկրների սպառողական գների ինդեքսների վերաբերյալ տեղեկանք»-ի հիման վրա:

[2] Եվրամիության երկրների համար ներկայացված են միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված և Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտներին համապատասխան հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ

**«Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2020թ. հունվար-դեկտեմբերին»** ամսուլի հաղորդագրության հրապարակման ժամկետը, համաձայն «2021 թվականի վիճակագրական ծրագրի», նախատեսված է 2021թ. հունվար ամսվա 5-րդ աշխատանքային օրը (տես՝ ծածկագիր 1300-305, Մաս 3, էջ 131):